Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մ. Գ. Բարսեղյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Սույն կարգը «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՃՇՀԱՀ) յուրաքանչյուր 5 տարիների համար նախատեսված Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) մշակման, հաստատման և իրականացման մշտադիտարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող փաստաթուղթ է:

1.2. Սույն կարգի ընդունման իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և ՃՇՀԱՀ այլ ներքին իրավական ակտեր:

1.3. ՃՇՀԱՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումները (այսուհետ՝ ստորաբաժանումներ) մշակում են բուհի առաքելությանը և տեսլականին չհակասող սեփական ռազմավարություններ, որոնք արտահայտում են ստորաբաժանման գործունեության հեռանկարային նպատակները և խնդիրները:

1.4. Ստորաբաժանումների մակարդակով ռազմավարական պլանավորում իրականացնելու նպատակով ձևավորվում են ռազմավարությունների մշակման աշխատանքային խմբեր (այսուհետ՝ աշխատանքային խմբեր), որտեղ ընդգրկվում են պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատակիցներ, ուսանողներ, արտաքին շահակիցներ (գործատուների, գերատեսչությունների,

տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլոք) :

1.5. Ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է աշխատանքային խմբի ղեկավար:

1.6. Աշխատանքային խմբի անդամների թիվը կախված է տվյալ ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների ծավալից և դրանց առանձնահատկություններից:

1.7. Բուհի մակարդակով ստորաբաժանումների ռազմավարությունների ինտեգրումը իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովում ներգրավվում են պրոռեկտորներ, ֆակուլտետների դեկաններ/տեղակալներ, ամբիոնների վարիչներ, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի աշխատակիցներ, ուսանողներ:

1.8. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի/ստորաբաժանումների ռազմավարությունների մշակման գործընթացները իրականացվում են գիտահետազոտական հենքի վրա, մասնավորապես՝ SWOT-վերլուծության մատրիցայի, PEST-վերլուծության, ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների, ֆոկուս խմբերի, սեմինարների, համաժողովների ընթացքում իրականացված քննարկումների արդյունքների վերլուծության հիման վրա:

1.9. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի/ստորաբաժանումների ռազմավարությունների մշակումը/վերանայումը/լրամշակումը իրականացվում է յուրաքանչյուր հինգ տարիները նախորդող երկու ամիսների ընթացքում:

1.10. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի/ստորաբաժանումների ռազմավարությունների ճշգրտումը/վերանայումը/լրամշակումը կարող է իրականացվել բուհի կառավարման բարձրագույն մարմնի՝ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, ըստ սույն կարգով նախատեսված ընթացակարգի՝ ցանկացած ռազմավարական նշանակության և այլ բնույթի փոփոխություններ առաջանալու դեպքում:

1.11. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

ա) ***ռազմավարական պլանավորումը՝*** շարունակական գործընթաց է, որն իրականացվում է համաբուհական և ստորաբաժանումների մակարդակներում և ուղղված է հեռանկարային նպատակների և դրանց հասնելու ուղիների որոշմանը:

բ) ***Ռազմավարական ծրագիրը (ՌԾ-ը)***՝ բուհի ճանապարհային քարտեզն է, որը ուրվագծում է իր նպատակները, դրանց հասնելու ուղիները և անհրաժեշտ ռեսուրսները (մարդկային, ֆինանսական և տեխնիկական): Այն համահունչ է ՃՇՀԱՀ-ի առաքելությանը, տեսլականին և արժեքներին:

գ) ***առաքելությունը***՝ նկարագրում է, թե որն է բուհի մասնագիտացումը, և որոնք են բուհի հեռանկարային ձգտումները: Ռազմավարական պլանավորումը սկսվում է առաքելության ձևակերպումից, որը հիմք է ծառայում նպատակների և առաջընթացի ուղու ձևավորման:

դ) ***տեսլականը***՝ բուհի ապագայի վերաբերյալ նկարագիր է:

ե) ***SWOT – վերլուծությունը***՝ ռազմավարական պլանավորման բարձրամակարդակ մոդել է, որն օգնում է կազմակերպությանը բացահայտել բարելավում պահանջող ոլորտները, ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրանից դուրս: «SWOT»-ը անգլերեն բառերի հապավում է՝Strengths (ուժեղ կողմեր), Weaknesses (թույլ կողմեր), Opportunities (հնարավորություններ), Threats (վտանգներ):

զ) ***PEST – վերլուծությունը***՝ կառավարման գործիք է, որի շնորհիվ կազմակերպությունը իր մրցունակությունը ապահովելու նպատակով, կարող է գնահատել իր գործունեության վրա ազդող հիմնական մակրոմակարդակի արտաքին գործոնները: «PEST»-ը անգլերեն բառերի հապավում է՝ Political (քաղաքական), Economic (տնտեսական), Social (սոցիալական), Technological (տեխնոլոգիական):

է) ***բուհի հնգամյա կատարողականը***՝ պլանավորման հնգամյակին նախորդող ՃՇՀԱՀ-ի գործունեության հինգ տարիների ՌԾ-ի նպատակների իրականացման գնահատումն է՝ ՌԾ-ով սահմանված գնահատման առանցքային ցուցանիշների կիրառմամբ:

ը) ***ստորաբաժանման ռազմավարությունը***՝ ՃՇՀԱՀ-ի ուսումնաօժանդակ և վարչական կառուցվածքում ընդգրկված յուրաքանչյուր ստորաբաժանման ռազմավարական նպատակների և խնդիրների ամբողջություն է, որոնք համահունչ են բուհի առաքելությանը, տեսլականին, ռազմավարական ծրագրի նպատակներին:

թ) ***բուհի ՌԾ-ի կատարման տարեկան կատարողականը՝*** ՌԾ-ով նախատեսված ռազմավարական նպատակներին համահունչ տարեկան պլանի կատարման արդյունք է:

ժ) ***ստորաբաժանման տարեկան կատարողականը՝*** ստորաբաժանման գործողությունների տարեկան պլանի կատարման արդյունք է:

ժա) ***ներքին շահակիցները՝*** բուհի արդյունավետ գործունեությամբ շահագրգռված ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցները և այլ ներքին շահագրգիռ կողմերն են:

ժբ) ***արտաքին շահակիցները՝*** բուհի արդյունավետ գործունեությամբ շահագրգռված պետական և մասնավոր սեկտորի ձեռնարկությունները/ կազմակերպությունները/գերատեսչությունները/գործակալությունները, գործատու ընկերությունները/ կազմակերպությունները, համայնքի/երկրի հանրությունը, տեղական ինքնակառավարման մարմինները և այլ արտաքին շահագրգիռ կողմերն են:

II. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2.1. Սույն ընթացակարգը սահմանում է ՃՇՀԱՀ-ում ՌԾ-ի մշակման գործընթացը, որի իրականացումը պարտադիր է բուհի կառավարման համակարգի բոլոր մակարդակների կառուցվածքային ստորաբաժանումների/ղեկավարների համար:

2.2. ՌԾ-ի նախագծի մշակման նպատակով՝ ռեկտորի հրամանով ձևավորվում է Հանձնաժողով, որը պլանավորում, համակարգում և հսկում է ՌԾ-ի մշակման գործընթացը:

2.3. Հանձնաժողովը համակարգում է ՌԾ-ի մշակման նախապատրաստական աշխատանքները (ՌԾ-ի մշակման գործընթացի ժամանակացույցի կազմում, ստորաբաժանումների ռազմավարությունների ինտեգրում բուհի մակարդակով, բուհի գործունեության հետագա հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում):

2.4. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի մշակումը կատարվում է գործողությունների հետևյալ հաջորդականությամբ՝

1) ՌԾ-ի մշակման գործընթացի ժամանակացույցի (այսուհետ՝ Ժամանակացույց) ձևավորում՝ ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի «Ռազմավարական պլանավորման և որակի ապահովման» բաժնի կողմից.
2) ժամանակացույցի համաձայնեցում վարչական կազմի/ստորաբաժանումների հետ.
3) ժամանակացույցի հաստատում ռեկտորի կողմից.
4) աշխատանքային խմբերի ձևավորում՝ նախորդ հինգ տարիների ընթացքում ստորաբաժանումների գործունեության կատարողականի վերլուծական աշխատանքները կատարելու համար.
5) աշխատանքային խմբերի կողմից, նախորդ հինգ տարիների ընթացքում ստորաբաժանումների գործունեության կատարողականի վերլուծություն՝ ՌԾ-ով սահմանված կատարողականի առանցքային ցուցանիշների (ԿԱՑ) կիրառմամբ.
6) ստորաբաժանումների նախորդ հինգ տարիների կատարողականի վերլուծության արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում՝ նախորդ հինգ տարիների ՌԾ-ի կատարողականի վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունում ներառելու նպատակով.
7) բուհի գործունեության անցած հինգ տարիների ՌԾ-ի կատարողականի ներկայացում Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը՝ ռեկտորի հաշվետվության տեսքով.
8) աշխատանքային խմբերի կողմից բուհի առաքելությանը և տեսլականին չհակասող սեփական ռազմավարությունների մշակում, որոնք արտահայտում են ստորաբաժանման գործունեության հեռանկարային նպատակները.
9) ռեկտորի հրամանով՝ ՃՇՀԱՀ-ի գործունեության հետագա հինգ տարիների ՌԾ-ի կազմման Հանձնաժողովի ձևավորում.
10) ստորաբաժանումների ռազմավարությունների ինտեգրում՝ բուհի մակարդակով, և բուհի գործունեության հետագա հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում (SWOT-մատրիցայի կազմում, PEST-վերլուծության իրականացում, հանրային քննարկումների անցկացում՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ).

11) հետագա հինգ տարիների ռազմավարական նպատակների, խնդիրների և գնահատման առանցքային ցուցիչների ձևավորում.

12) բուհի գործունեության հետագա հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի նախագծի կազմում, քննարկում և հաստատում:

2.5. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի մշակման ժամանակացույցը ներառում է սույն ընթացակարգի կետ 2.4-ում նշած գործողությունները, և կազմվում է Հավելված 1-ում ներկայացված ձևաչափով: Ռեկտորի հաստատումից հետո այն պարտադիր է կատարման՝ բուհի բոլոր ստորաբաժանումների, ինչպես նաև վարչական համակարգի բոլոր մակարդակների ղեկավարների համար:

2.6. Նախորդ հինգ տարիների ընթացքում ստորաբաժանումների գործունեության կատարողականի վերլուծական աշխատանքները կատարելու համար ձևավորվող աշխատանքային խմբերի անդամակիցները առաջարկվում են ստորաբաժանումների/վարչական տարբեր մակարդակների ղեկավարների կողմից և ներառում են պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի աշխատակիցներին, ինչպես նաև ուսանողներին:

2.7. Նախորդ հինգ տարիների կատարողականի վերլուծության հիմքում ընկած են ստորաբաժանումների գործողությունների տարեկան պլանների կատարողականի վերլուծությունները:

2.8. Աշխատանքային խմբերի կողմից նախորդ հինգ տարիների կատարողականի վերլուծության հաշվետվությունը՝ իր կառուցվածքով և գնահատման չափանիշներով, պետք է համապատասխանի ՌԾ-ին:

2.9. Բուհի նախորդ հինգ տարիների կատարողականի վերլուծության հաշվետվությունը՝ իր կառուցվածքով և գնահատման չափանիշներով, պետք է համապատասխանի ՌԾ-ին:

2.10. ՃՇՀԱՀ-ի հետագա հինգ տարիների համար նախատեսվող ՌԾ-ը պետք է ներառի հետևյալ տարրերը՝

ա) ՃՇՀԱՀ-ի առաքելությունը,

բ) ՃՇՀԱՀ-ի արժեքները,

գ) ՃՇՀԱՀ-ի տեսլականը,

դ) ՃՇՀԱՀ-ի ռազմավարական նպատակներն ու խնդիրները՝ ըստ գործունեության առանձին ոլորտների,

ե) Ռազմավարական նպատակների և խնդիրների ապահովման աստիճանը գնահատող առանցքային ցուցիչներ,

զ) Նպատակների և խնդիրների ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումների անվանումները/վարչական կազմի աշխատակիցների պաշտոնները,

է) Նպատակների և խնդիրների իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը,

ը) Նպատակների և խնդիրների իրականացման համար նշանակված պատասխանատուներին, անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները:

2.11. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագիծը դրվում է լայն քննարկման՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ՝ ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Սույն ընթացակարգի կետ 2.4-ում ներկայացված տրամաբանորեն փոխկապակցված գործողությունների արդյունքում ձևավորված ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագիծը՝ Հանձնաժողովի ներկայացմամբ՝ ժամանակացույցով նախատեսված ժամկետներում, դրվում է լայն քննարկման:

3.2. Լայն քննարկումների կազմակերպումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ՝ ստորև բերված ձևաչափերով.

ա) կլոր սեղան,

բ) սեմինար,

գ) համաժողով,

դ) կոնֆերանս,

ե) աշխատաժողով (վորկշոպ),

զ) փորձագետների հարցում (առցանց կամ թղթային հարցաշարի կիրառմամբ),

է) փորձագետների խորքային հարցազրույցներ:

3.3. Կետ 3.2-ում թվարկված ձևաչափերի առկա և/կամ հեռավար եղանակների կիրառմամբ՝ ներքին և արտաքին շահակիցներից ստացված առաջարկությունները Հանձնաժողովի կողմից վեր են լուծվում և ամփոփվում են՝ հիմք դառնալով բուհի հետագա հինգ տարիների առաքելության, ռազմավարական նպատակների և խնդիրների ձևավորման/վերանայման/լրամշակման համար:

3.4. Հանձնաժողովի կողմից մշակված ՌԾ-ի նախագիծը ներկայացվում է Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը՝ Ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

IV. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1 ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագիծը նախապես (Ժամանակացույցով սահմանված ժամկետում) տրամադրվում է Հոգաբարձուների խորհուրդի անդամներին՝ ծանոթանալու և/կամ դիտարկումներ/առաջարկություններ/փոփոխություններ կատարելու նպատակով:

4.2 Հոգաբարձուների խորհրդի անդամներից ստացված դիտարկումները, մեկնաբանություններն ու առաջարկությունները Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի կողմից մեկ փաստաթղթի ձևաչափով ուղարկվում են Հանձնաժողովի անդամներին՝ Ժամանակացույցով սահմանված ժամկետում:

4.3 Հանձնաժողովի անդամները քննարկում են Հոգաբարձուների անդամների կողմից կատարված դիտարկումներն ու առաջարկությունները և անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան փոփոխություններ ՌԾ-ի նախագծում:

4.4 ՃՇՀԱՀ-ի ռեկտորը Ժամանակացույցով սահմանված ժամկետում Հոգաբարձուների խորհրդի նիստին ներկայացնում է ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագիծը:

4.5 Հոգաբարձուների խորհրդի անդամները ՃՇՀԱՀ-ի կանոնակարգով սահմանված ընթացակարգով մասնակցում են քվեարկությանը՝ ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագծի հաստատման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

4.6 ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի նախագիծը համարվում է հաստատված՝ որպես վերջնական տարբերակ, եթե դրա հաստատման օգտին քվեարկել է Հոգաբարձուների խորհրդի անդամների մեծամասնությունը:

V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

5.1 ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի իրականացման գործընթացը մշտադիտարկվում է Հանձնաժողովի կողմից՝ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության տարեկան պլանների կատարողականների հսկման միջոցով:

5.2 Յուրաքանչյուր տարվա ավարտին ստորաբաժանման գործողությունների տարեկան պլանի կատարողականի առանցքային ցուցիչները համեմատվում են ՌԾ-ի նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետությունը ապահովող գնահատման առանցքային ցուցիչների հետ:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

6.2 Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո տասներորդ օրը:

6.3 Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար Լ.Հ. Լևոնյան

10 հուլիսի, 2024թ.

Գիտական խորհրդի արձանագրություն №01-07/24

Հավելված 1. ՃՇՀԱՀ-ի ՌԾ-ի մշակման գործընթացի ժամանակացույցի ձևաչափ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի _____թթ.-ի Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի

hh	Գործողություն	Սկիզբ	Ավարտ	Կատարող
1.	Հանձնաժողովի ձևավորում			Ռեկտոր
2.	ՌԾ-ի մշակման գործընթացի ժամանակացույցի ձևավորում			Հանձնաժողով
3.	ՌԾ-ի մշակման գործընթացի ժամանակացույցի համաձայնեցում ստորաբաժանումների հետ			Հանձնաժողով
4.	Ժամանակացույցի հաստատում			ՃՇՀԱՀ-ի ռեկտոր
5.	Աշխատանքային խմբերի ձևավորում			Վարչական ստորաբաժանումներ/ ղեկավարներ
6.	Նախորդ հինգ տարիների ընթացքում ստորաբաժանումների գործունեության կատարողականի վերլուծություն			Աշխատանքային խմբեր
7.	Ստորաբաժանումների նախորդ հինգ տարիների կատարողականի վերլուծության արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում			Աշխատանքային խմբեր
8.	Բուհի գործունեության անցած հինգ տարիների ՌԾ-ի կատարողականի ներկայացում Հոգաբարձուների խորհուրդ (Ռեկտորի զեկույց)			Հոգաբարձուների խորհուրդ, Ռեկտոր
9.	Ստորաբաժանումների ռազմավարությունների մշակում հետագա հինգ տարիների համար			ՃՇՀԱՀ-ի ստորաբաժանումները
10.	Ստորաբաժանումների ռազմավարությունների ինտեգրում և բուհի գործունեության հետագա հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքներ			Հանձնաժողով
11.	Հաջորդ հինգ տարիների ռազմավարական նպատակների, խնդիրների և գնահատման առանցքային ցուցիչների ձևավորում			Հանձնաժողով

12.	ՃՇՀԱՀ-ի գործունեության հաջորդ հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի նախագծի կազմում			Հանձնաժողով
13.	ՃՇՀԱՀ-ի գործունեության հաջորդ հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի նախագծի քննարկում			Ներքին և արտաքին շահակիցներ
14.	ՃՇՀԱՀ-ի գործունեության հաջորդ հինգ տարիների համար նախատեսված ՌԾ-ի նախագծի հաստատում			Հոգաբարձուների խորհուրդ